YOUTH INITIATIVE CENTRE
ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
GYUMRI "YOUTH INITIATIVE CENTRE" NGO

Հունվար 26, 2021, № Ե5-01/21

Գյումրու համայնքի ղեկավար Սամվել Բալասանյանին
Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»
ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանից
Հեռ. 055 85 83 07, 095 91 91 97

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 02 02 2021 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 1896

## ԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ պարոն Բալասանյան,

Գյումրու համայնքապետարանի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության միջև 2019թ.-ի հունիսի 28-ին կնքված փոխհամագործակցության հուշագիրը հիմք դարձավ՝ համայնքային և հասարակական կառույցների համագործակցության նախատիպը չունեցող ձևաչափի՝ օրինակ հանդիսանալով այլ համայնքների համար, որի արդյունավետության մասին նաև նշվում է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչների կողմից: Հուշագրի համաձայն՝ Գյումրու համայնքապետարանը պատրաստակամություն է հայտնել ապահովել «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի պահպանման ամենամյա ծախսերը՝ կոմունալ վճարների տեսքով (տարեկան 600.000 ՀՀ դրամի չափով), որն առաջին անգամ տրամադրվել է «Գյումրու երիտասարդների տանը» 2020թ.-ին:

Գյումրու համայնքապետարանի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում և տրամադրված աջակցության շնորհիվ մեր կենտրոնը, չնայած COVID 19-ի առաջացրած մարտահրավերների, ձեռնարկեց բոլոր միջոցներն՝ արտակարգ իրավիճակների պայմաններում զարգացման անվճար ծառայություններ տրամադրելով թվով 600 մարգինալացված երիտասարդի:

Հաշվի առնելով պատերազմի պատճառով հարյուրավոր արցախցի հայրենակիցների ծանր դրության մեջ հայտնվելու հանգամանքը՝ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը» «Գյումրու երիտասարդների տան» հետ համատեղ ձեռնարկեցին աշխատանքներ Արցախից եկած ընտանիքների պատանիներին և երիտասարդներին՝ ոչ-ֆորմալ կրթություն, զբաղվածություն և ժամանց կազմակերպելու համար, որում ևս իր գնահատելի ներդրումն ունեցավ համայնքապետարանը: Արդյունքում հնարավոր եղավ հոկտեմբերի 15-ից առ այսօր երիտասարդական նպատակային ծառայություններ մատուցել թվով 50 արցախցի պատանու, որոնց հետ աշխատանքը լինելու է շարունակական:

Հասցե. Շահումյան 69, Գյումրի 3101, Հայաստան | Հեռ. +374 (0) 95 91 91 97 | Էլ-փոստ. yic@yic.am | Վեբ կայք. www.yic.am
Address: Shahumyan 69, Gyumri 3101, Armenia | Tel. +374 (0) 95 91 91 97 E-mail: yic@yic.am | Web site: www.yic.am

Հաշվի առնելով մեր կառույցների միջև համագործակցության արդյունավետությունն ու կենտրոնի ծառայությունների կարևորությունը Գյումրիում սակավ հնարավորություններով պատանիների և երիտասարդների ոչ-ֆորմալ կրթության և զարգացման գործում՝ ակնկալում ենք շարունակական համագործակցություն՝ հիմք ընդունելով փոխհամագործակցության հուշագիրը:

Կենտրոնի համար անչափ գնահատելի է Գյումրու համայնքապետարանի աջակցությունը «Գյումրու երիտասարդների տան» որակյալ ծառայություններն ավելի հասանելի դարձնելու գործում:

Շնորհակալություն համագործակցության և աջակցության համար:

Հարգանքով՝

Արթուր Նաջարյան
ԵՆԿ ՀԿ նախագահ